
ԻՎԱՐՇԱ ԵՎ ՄԱՐԴՈՒԿ ԱՍՏՎԱԾՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ ԱՐԱՐԱՏՅԱՆ
ԴԱՇՏՈՒՄ

ՆՎԱՐԴ ՏԻՐԱՅՅԱՆ

Էրեբունի՝ քաղաքի ուրարտական susi տաճարի աջ ու ձախ շարվածքներում միննույն բովանդակության երկու արձանագրություններում հիշատակվում է Iarša աստծու անունը¹: Արգիշթի I-ը՝ Էրեբունի քաղաքի հիմնադիրը, այս աստծուն է ձոնել susi տաճարը: Մոտ հարյուր տարի անց Ռուսա II-ի Թեյշեբայինի-Կարմիր բլուրի արձանագրությունում հիշվում է նույն աստվածը, այս անգամ Iarša ձևով²:

Էրեբունի քաղաքում Արգիշթին վերաբնակեցրել է Խաթե և Ծուփանի երկրներից բերված 6600 ռազմիկներին³: Ծուփանին հայկական Ծուփն է, իսկ Խաթեն՝ Մելիտեա-Մալաթիայի շրջանը, որը ժառանգել էր Խեթական կայսրության անվանումը: Այս 6600 ռազմիկները պետք է լինեին նախորդ տարվա արշավանքի ընթացքում գերվածներից (հիմնականում՝ Խաթեից)⁴:

Բվարշայի ծագմանը մանրամասն անդրադարձել է Գ. Մելիքիշվիլին: Քանի որ նշված երկրների բնակչությունը լուվական էր, ապա Բվարշային կարելի է նույնացնել լուվական երկրորդական աստվածներից մեկի՝ Imaršiya-ի հետ: Այս հարցին նվիրված առաջին հոդվածում հեղինակը մեկնաբանում է դիցանունը որպես «երկրային»⁵, իսկ երկրորդում՝ ճշտում իր տեսակետը որպես «հովտային» (ըստ

¹ Հեղինակն իր երախտագիտությունն է հայտնում Արամ Քոսյանին, Արմեն Պետրոսյանին և Երվանդ Գրեկյանին՝ գրականություն տրամադրելու, հոդվածին նախապես ծանոթանալու և արժեքավոր մի շարք դիտողություններ կատարելու համար:

² Н. В. А р у т ю н я н. Корпус урартских клинообразных надписей (*այսուհետև՝* КУКН), Ереван, 2001, с. 195-196.

³ КУКН, 424. Յ. Ֆրիդրիխը, ի տարբերություն խորհրդային հետազոտողների, I(u)arša-ն կարդում է I(u)urša (*տե՛ս* J. F r i e d r i c h. Urartäische t'aischa Kleinigkeiten 1); Zu den neuen Gottesnamen. Archiv für Orientforschung, XIX, Graz, 1959-1960, S. 32. Այս ընթերցման հիման վրա մի հույժ վարկածային մեկնաբանություն *տե՛ս* А. А. В а й м а н. Сообщения урартских царей о потерях врага и урартский бог мертвых.– Эрмитажные чтения памяти Б. Б. Пиотровского. СПб., 1994, с. 15-16: *Նույն սեպագիրը կարող է ընթերցվել և ar li ub, բայց ուրարտական տեքստերում վկայված է միայն առաջին ընթերցումը (տե՛ս* КУКН, с. 211-212, примеч. 1):

⁴ КУКН, 173, II; КУКН, 174, A2.

⁵ Г. А. М е л и к и ш в и л и. К вопросу о хетто-цупанийских переселенцах в Урарту.– Вестник древней истории (*այսուհետև՝* ВДИ), 1958, № 2, с. 41-42, 47, примеч. 30; Б. Б. П и о т р о в с к и й. Ванское царство. М., 1959, с. 159; И. М. Д в я к о н о в. Предыстория армянского народа. Ереван, 1968, с. 233, примеч. 111.

⁶ Г. А. М е л и к и ш в и л и. *Նշվ. աշխ.*, էջ 45-46:

լուվերեն imaraša «հովիտ» բառի⁷: Ֆ. Հասագի՝ խեթական կրոնի վերաբերյալ հիմնարար մենագրության մեջ Immarši-ն ստուգաբանվում է որպես «պտղաբերության ոգի»⁸:

Ա. Պետրոսյանը Բվարշայի համար այլ նախատիպ է ենթադրում: Քանի որ նա պաշտվում էր susi տաճարում, որը մյուս դեպքերում նվիրվել է գերագույն աստված Խալդիին, ապա նա ևս պիտի լիներ մեծ աստված: Լուվական մեծ աստվածների մեջ I(u)arša-ի հետ համադրելի է I(y)arriš-ը⁹: Եղել են Բվարշայի նաև այլ ստուգաբանություններ¹⁰:

Բ. Դյակոնովը և Գ. Սարգսյանը նույնպես Բվարշային համարում են Խաթե և Ծուփանի երկրներից բերված վերարնակիչների աստված, միայն հավանական են համարում նրանց հայախոս լինելը¹¹: Բայց դիցանվան համար ոչ մի հայկական ստուգաբանություն չի առաջարկվում: Ըստ Ն. Հարությունյանի և Մ. Բարայեյանի, Բվարշան Արարատյան դաշտի բնիկների աստվածն էր¹²: Ս. Հմայակյանը գտնում է, որ Բվարշայի երկրորդ հիշատակությունը վկայում է այն մասին, որ Արարատյան դաշտում՝ մասնավորապես 'Aza երկրում, եղել է Բվարշային պաշտող հոծ բնակչություն, որը պահպանել էր իր ինքնությունը հարյուր տարվա ընթացքում: Հետուրարտական դարաշրջանում այդ պաշտամունքը, թերևս, նույնացվել է Միթրային¹³:

Երբ Թեյշեբահինիում, Ռուսա II-ի մի արձանագրության մեջ Բվարշան, արդեն Բարշա ձևով, հիշվում է իր առաջին հիշատակությունից մոտ հարյուր տարի անց, նույն ժամանակ և նույն տեղում, նույն արքայի մեկ այլ արձանագրության մեջ, առաջին և վերջին անգամ հիշատակվում է ուրարտական դիցարանին խորթ մեկ այլ աստծու անուն՝ 'AMAR.UTU¹⁴: Սա Բաբելոնի գլխավոր աստծու՝ Մարդուկի գաղափարագիրն է, որն այստեղ հանդես է գալիս անեծքի բանաձևում, ուրարտական մեծ աստվածների եռյակից հետո:

Առաջին գրավոր տեղեկությունները Մարդուկի մասին հայտնի են մ. թ. ա. երրորդ հազարամյակից: Հիշատակվում են հատկապես Մարդուկի իմաստնությունը, հիվանդություններից ապաքինելու, բժշկելու արվեստը: Մարդուկի վերաբերյալ

⁷ Г. А. М е л и к и ш в и л и. К изучению древней восточно-малоазийской этнонимии.— ВДИ, 1962, № 1, с. 60-61.

⁸ V. H a s. Geschichte der hettitischen Religion. Leiden, New York, Köln, 1994, S. 582, Anm. 278.

⁹ Ա. Պ ե տ ը ո ս յ ա ն. Էրեբունիի հին բնակչության ծագման շուրջ.— Հայոց ազգածագման հարցեր, Երևան, 2006, էջ 42:

¹⁰ О. О. К а р а г е з я н. Локализация урартского царского города Арцашку.— «Вестник общественных наук» АН АрмССР, 1976, № 5, с. 79; Ա. Պ ե տ ը ո ս յ ա ն. «Շարայի ցեղամիությունը» Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում (մ. թ. ա. VI-V դդ.)— ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1979, № 12, էջ 75:

¹¹ И. М. Д ъ я к о н о в. Եջվ. աշխ., էջ 233, Գ. Ս ա ը գ ո ս յ ա ն. Ուրարտական տեղությունը և հայերը. Ուրարտու-Հայաստան, Երևան, 1988, էջ 117-118:

¹² Н. В. А р у т ю н я н. Новые урартские надписи Кармир-блуга. Ереван, 1966, с. 94; КУКН, с. 211, 484; Ա. Բ ո ս յ ա ն. Էրեբունի բերդ-քաղաքի պատմությունը, Երևան, 1971, էջ 78-79:

¹³ Ա. Հ մ ա կ յ ա ն. Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990, էջ 60-63:

¹⁴ КУКН, 427.

հիմնական առասպելը հայտնի է «Էնումա էլիշ» դիցերգությունից. նա նետով սպանում է Թիամաթին, որով և սկիզբ է դնում տիեզերքի կարգավորված կառույցին, ապա դառնում աստվածների տիրակալը: Մեկ այլ առասպելում պատմվում է, թե ինչպես ռազմի և ժանտախտի Էրրա աստվածը խաբեությամբ Մարդուկից վերցնում է իշխանությունը և սարսափելի չարագործություններ կատարում: Մ. թ. ա. XIV դարից սկսած Մարդուկի պաշտամունքը տարածվում է նաև Ասորեստանում, որին, սակայն, հակակշռում է տեղական Աշուր աստվածը: Ժամանակի ընթացքում Աշուրը և Մարդուկը հաճախ նույնացվում և փոխարինում են միմյանց¹⁵:

Մարդուկ աստծո հիշատակությունը Ուրարտուում Ն. Հարությունյանը բացատրում է՝ Aza երկրում «բաբելոնյան» բնակչության առկայությամբ: Նրանք կարող էին գերեվարվել Արգիշթի I-ի 781 թ. և Մարդուրի II-ի 751/750 թ. դեպի Բաբելոն երկիրը կատարած արշավանքների ժամանակ և վերաբնակեցվել Արարատյան դաշտում¹⁶: Ըստ մեկ այլ կարծիքի, ⁴AMAR.UTU գաղափարագրով նշվել է ուրարտական դիցարանի չորրորդ աստված Խուտուիինի¹⁷:

Ստորև ներկայացնենք մեր նկատառումներն այս երկու աստվածների՝ Արարատյան դաշտում հիմնավորվելու առնչությամբ: Մեզ առավել հավանական է թվում Իվարշայի՝ Ա. Պետրոսյանի մեկնաբանությունը: Իվարշան, ինչպես ասվեց, պաշտվում էր susi կոչվող տաճարում, իսկ դրանք համարյա միշտ նվիրվում էին Խալդիին¹⁸: Ուրեմն, նա որոշ առումներով համադրելի է եղել Խալդիի հետ¹⁹: Հայտնի է, որ Ուրարտուում Խալդիի պաշտամունքն այնքան էր գերազանցում մյուս աստվածների պաշտամունքին, որ համեմատելի էր նույնիսկ միաստվածության հետ²⁰: Այդ պաշտամունքը Գ. Ղափանցյանի կողմից բնորոշվել է որպես «խալդամոլություն»²¹: Ուրարտական պետության քաղաքական մի առանձնահատկություն էր Խալդիի պաշտամունքի ներդրումը գրաված տարածքներում, որով Ուրարտուն տարբերվել է մնացած բոլոր հինարևելյան կայսրություններից²²: Այս

¹⁵ В. К. Афанасьева. Мифы народов мира. Т. II, М., 1982, с. 110.

¹⁶ В. Н. Арутюнян. *Նշվ. աշխ.*, էջ 96–97, КУКН, с. 358, примеч. 11, 412. *Կարծում են, որ ուրարտական արձանագրությունների Բաբելոն Բաբելոն քաղաքը կամ բաբելոնյան թագավորությունը չէ, այլ Դիալա գետի միջին և վերին հոսանքների շրջանը, որը «բաբելականացված» էր բնակչությամբ և մշակույթով (տե՛ս Н. В. Арутюнян. Топонимика Урарту. Ереван, 1985, с. 50): Ըստ մեկ այլ կարծիքի, Բաբելոն երկիրը հենց Բաբելոնն է (տե՛ս Հ. Կարապետյան. Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում, I, 1. սեպագիր տեղանուններ. Երևան, 1998, էջ 311):*

¹⁷ Ռ. Վարդանյան, Բ. Մկրտչյան. Բիայնի-Վանի թագավորության դիցարանի դասակարգման փորձ.– Հայաստանի Հանրապետության 1989-90 թթ. դաշտային հնագիտական աշխատանքներին նվիրված գիտական նստաշրջան. գեկուցումների թեզիսներ, Երևան, 1991, էջ 58:

¹⁸ Հայտնի է միայն մեկ այլ դեպք, երբ susi տաճար է նվիրվել այլ աստծու՝ Բրմուշինիին (տե՛ս՝ КУКН, 247):

¹⁹ Г. Меликишвили. К вопросу о хетто-цупанийских переселенцах в Урарту, с. 45-46; Մ. Բարայելյան. *Նշվ. աշխ.*, էջ 79, Մ. Հմայակյան. *Նշվ. աշխ.*, էջ 60:

²⁰ Մ. Հմայակյան. *Նշվ. աշխ.*, էջ 34:

²¹ Գ. Ղափանցյան. *Ուրարտուի պատմությունը*, Երևան, 1940, էջ 114:

²² И. М. Дьяконов. Жертвоприношения в Тейшебаини.– Кавказско-ближневосточный сборник, Тбилиси, 1988, с. 58; Ն. Արամյան. К вопросу о символе Халди.– Древний Восток, IV, Ереван, 1983, с. 190.

դեպքում տաճար է կառուցվել մեկ այլ աստծու համար, և հավանական է, որ նա լինեի Խալդիի մի համապատասխանությունը:

Ն. Հարությունյանը, ենթադրելով, որ Բվարշան Արարատյան դաշտի բնիկների աստվածներից է, գրում է, որ տաճարի հատկացումը նրան արտացոլում է ուրարտական իշխանության որոշակի հարգանքը տեղական բնակչության նկատմամբ և հեռատես քաղաքականությունը: Բայց Արգիշթին, որը էրեբունիում օտարերկրյա ռազմիկներ էր բնակեցրել տեղական բնակչությանը հնազանդեցնելու նպատակով, դժվար թե ամրոցում տաճար հատկացներ տեղական աստծուն: Առավել հավանական է, որ նա հարգանք դրսևորեր և տաճար կառուցեր ամրոցի՝ իր իսկ գաղթեցրած ու իրեն ծառայող կայազորի, և ոչ գրավյալ բնակչության աստծու համար:

Ուրեմն, ավելի հավանական է արևմտյան և ոչ տեղական ակունքներ փնտրել Բվարշայի համար: Բայց ինչպե՞ս կարող էր Արգիշթին, Ուրարտուի «խալդամու» արքան, մի երկրորդական օտարերկրյա աստվածության համար susi կառուցելով, բարձրացնել նրան, հասցնելով Խալդիին, այսպիսով ստորացնել վերջինիս: Եթե ընդունելու լինենք այս, ապա և հետազոտողների մեծ մասի փաստարկները և համարենք, որ Բվարշայի պաշտամունքը բերվել է Խաթի ու Օուփանի երկրներից, ապա նրա համար, որպես նախատիպ, պետք է մեկ այլ, մեծ աստծու կերպար որոնել լուվական դիցարանում:

Լուվական մեծ աստվածների անունները հայտնի են: Հայտնի է նաև, որ լուվական աստվածների պաշտամունքը չի փոխանցվել այլ մշակույթների՝ բացառություն են կազմում ռազմի և ժանտախտի աստվածներ Բ(յ)արրին, Մանտան և արևի աստված Տիվատը՝ I(y)arriš, Šantaš, Tiuat (առաջին անուններում վերջին ձևն ուղղական հոլովի վերջավորությունն է), որոնք անցել են համախեթական դիցարան²³: Սրանցից, անվան նմանության պատճառով, Բվարշայի հետ կարող էր համեմատվել I(y)arriš-ը:

Խալդիի և Բարրիի համադրությունը հուսալի է նաև գործառությանի բնութագրերով՝ թե՛ Խալդին, թե՛ Բարրին ռազմի աստվածներ էին: Բարրիի տարբերակիչ գեներ էր աղեղը, և նա կոչվել է նաև հենց bēl qašti «աղեղի տեր»²⁴: Բարրին համապատասխանում է կամ նույնիսկ նույնական է միջագետքյան ռազմի և ժանտախտի աստված Էրրային²⁵, որը նաև կրակի աստված էր²⁶: Էրրան, որը գնում է անդրաշխարհ և վերադառնում այնտեղից, անբաժանելի է թվում Պլատոնի առասպելի ռազմիկ Էրից, որը զոհվելուց հետո վերակենդանանում է դիակիզման խարույկի վրա²⁷: Էրը, իր հերթին, վաղուց ի վեր նույնացվել է հայոց Արա Գեղեցիկի հետ: Հատկանշական է, որ Խալդին ևս հետուրարտական ժամանակներում, հավանա-

²³ O. R. G u r n e y. Some Aspects of Hittite Religion. Oxford, 1977, p. 16.

²⁴ Նույն տեղում, էջ 16, V. H a a s. Նշվ. աշխ., էջ 370-371:

²⁵ В. К. А ф а н а с ь е в а. Эппа.- В кн.: Мифы народов мира. Т. II, с. 669; V. H a a s. Նշվ. աշխ., էջ 370:

²⁶ J. J. R o b e r t s. Erra - Scorched Earth.- "Journal of Cuneiform Studies", 24, 1971.

²⁷ Ա. Պ է տ ր ն ո յ ա ն. Արա Գեղեցիկ և սուրբ Սարգիս.- Հայոց սրբերը և սրբավայրերը, Երևան, 2001, էջ 168:

բար, նույնացվել է Արա Գեղեցիկի հետ²⁸: Մ. թ. ա. IX դ. վահանի վրա Խալդին պատկերված է ճակատամարտի պահին, ամբողջովին բոցերի մեջ, մի ձեռքին նիզակ, մյուսում՝ աղեղ²⁹: Այսպիսով, Բարրին և Խալդին, որպես կրակի հետ կապված և նետաձիգ ռազմի աստվածներ, համադրելի են եղել գործառնություններով և կերպարներով: Կարծես ի հայտ է գալիս Խալդիի և Բարրի-Էրրա-Էր-Արա անուններով կոչվող կերպարների մի ընդհանրություն, որը կարող է հետաքրքիր լինել Խալդիի պաշտամունքի ծագման բացահայտման տեսակետից:

Լուվական ակունքներ կարելի է գտնել և Արարատյան դաշտի ⁴AMAR.UTU-ի համար: Այս գաղափարագիրը հայտնի է խեթական տասնյակ տեքստերից³⁰: ⁴AMAR.UTU-ն խեթալուվական աշխարհում նույնացվել է լուվական Šantaš աստծու հետ³¹ (այս անունը կարողում են որպես Սանտա, Սանդա, Շանտա, Շանդա): Առաջին անգամ, ⁴AMAR.UTU-ի գաղափարագրի տակ թաքնված՝ այս աստվածը հանդես է գալիս խեթական նոր թագավորության արքա Մուրսիլիս երկրորդի և Հայաստանի արքա Աննիայի միջև կնքած հաշտության պայմանագրում (մ. թ. ա. XIVդ.): Šantaš / ⁴AMAR.UTU-ն հայտնի է լուվական Zarpaya ծեսի նկարագրությունից: Ծեսի ժամանակ նրան և «կատաղի» աստվածներին զոհաբերում են այծ, որի նպատակը Սանտայի և նրա շրջապատի արյունոտ աստվածների՝ Իննարավանտաների առաջացրած համաճարակից՝ ժանտախտից ազատվելն է³²:

Սանտան, որպես ռազմի ու ժանտախտի աստված, որոշակիորեն համարժեք է Բարրիին: Նա ևս աղեղնավոր է, ինչն ավելի է մոտեցնում այդ երկու աստվածներին³³: Ուրարտուում այժեր զոհաբերվել են միայն Խալդիին: Սանտային այժ զոհաբերելը անուղղակիորեն կարող է ակնարկել Բարրիի և Խալդիի պաշտամունքների ևս մեկ ընդհանրություն:

Šantaš անունը միարժեք ստուգաբանություն չունի³⁴: Նրա պաշտամունքը պահպանվել է հետագա դարերում: Այսպես, սեմական բնակչության համար Սանտան նույնն էր, ինչ Տարսուս-Տարսոն քաղաքի Բաալը, իսկ հույների համար՝ նույն քաղաքի գլխավոր աստվածը, որին նրանք նույնացնում էին Հերակլեսի հետ³⁵: Փոքրա-

²⁸ Ա. Պե տր ու յ ա ն. Ուրարտա-հնդեվրոպական և հայկական առնչությունների շուրջ.– Հայոց ազգածագման հարցեր, էջ 18-23:

²⁹ O. B e l l i. The Anzaf Fortresses and the Gods of Urartu. Istanbul, 1999, p. 37-41, fig. 17.

³⁰ B. V a n G e s s e l l. Onomasticon of the Hittite Pantheon. Leiden, New York, Köln, 1998, p. 607-608.

³¹ E. L a r o c h e. Recherches sur les noms des dieux hittites. Paris, 1947, p. 88; O. R. G u r n e y. Նշվ. աշխ., էջ 16, 29-30, V. H a a s. Նշվ. աշխ., էջ 371:

³² O. R. G u r n e y. Նշվ. աշխ., էջ 29-30:

³³ Նույն տեղում, էջ 16, V. H a a s. Նշվ. աշխ., էջ 370-371:

³⁴ P. H o u w i n k t e n C a t e. The Luwian Population Groups of Lucia and Cilicia Aspera During the Hellenistic Period. Leiden, 1961, p. 136, note 3 (ենթադրվում է «ասիանիկ» ծագման աստված, թեև առաջարկված է և հնդեվրոպական ստուգաբանություն).

³⁵ P. H. J. H o u w i n k t e n C a t e. Նշվ. աշխ., էջ 136-137: Ելնելով Սանտայի ենթադրյալ ամպրոպային գործառնությունից, այդ անվան հետ է համեմատվել հայ. շանթ/շանդ «կայծակ» բառը (տե՛ս Հ. Ա ճ ա ո յ ա ն. Հայերեն արմատական բառարան. հ. III, Երևան, 1977, էջ 494, Գ. Բ. Դ շ ա յ կ յ ա ն. О соотношении хайасского и армянского языков.– ИФЖ, 1988, №2, с. 79): Սակայն Սանտայի հայտնի գործառնությունը կապված է պատերազմի և ժանտախտի հետ: Լուվական դիցարանում ամպրոպի աստվածը Tarhunt-ն էր: Սանտան, որպես մեծ աստված, կարող էր

սիական հունական արձանագրություններից հայտնի են Տանտ- Բադադի շրջանի մի շարք անձանուններ՝ ծագած այս դիցանունից³⁶: Մանտայի հետ է նույնացվում և Ջնսի ենթադրյալ ZANT- մակդիրը³⁷:

Հիերոգլիֆային լուսկական մի արձանագրության մեջ, գտնված Կայսերիի շրջանից, Մարդուկը հիշվում է իր անունով՝ Marutikas, որին նրա ծառան կամ քուրմը քարե կոթող է կանգնեցրել³⁸: Ուրեմն, հետիւթական դարաշրջանի Խաթե երկրում լուսկացիները պաշտում էին նաև հենց Մարդուկին, իր իսկական անունով:

Կարելի է ենթադրել, որ Մարդուկի պաշտամունքը ևս Արարատյան դաշտ է բերվել Խաթե և Ծուփանի երկրների վերաբնակիչների կողմից: Հնարավոր է պատկերացնել երկու տարբերակ: Արարատյան դաշտի Մարդուկը կարող էր ներկայացնել հենց լուսկացիների կողմից փոխառյալ Marutikas-Մարդուկին, որին ուրարտական գրիչը, սեպագրական ուղղագրության համաձայն, ներկայացրել է գաղափարագրով որպես ⁴AMAR.UTU: Բայց ինչքան ՚վ է հավանական, որ գերեզմանում լուսկացիները բերեին ոչ թե իրենց մեծ աստվածներից մեկի, այլ իրենց մոտ միայն մեկ անգամ վկայված, այսինքն՝ փոխառված մի պաշտամունք: Առավել հավանական է թվում, որ այստեղ ևս ⁴AMAR.UTU գաղափարագրի տակ նկատի է առնվել Մանտան:

Իհարկե, խեթական կայսրության անկումից մինչև Արգիշթիի գահակալությունը ավելի քան չորս դար էր անցել: Վերացել էր խեթական սեպագրական դպրոցը: Բայց խեթական պետականության ավանդույթներն ուղղակիորեն շարունակվում էին Հայկական լեռնաշխարհի արևմուտքի հետիւթական երկրներում (այդ թվում՝ Խաթե-Մալաթիայում), որտեղ դեռ երկար իշխում էին խեթական արքայատոհմի տարբեր ճյուղավորումները³⁹: Ուրարտական գրչության առանձնահատկությունները ցույց են տալիս, որ այն անընդհատորեն շարունակում է Միտաննիի և խեթա-

նույնացվել ամպրոպային Ջնսի և Բաալի տեղական որոշ տարբերակների հետ, բայց նրան չէին կարող բնորոշ լինել ամպրոպային հատկանիշները:

³⁶ P. Houwink ten Cate. Նշվ. աշխ., էջ 137, 231-232:

³⁷ Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов. Индоевропейский язык и индоевропейцы. Т. II, Тбилиси, 1984, с. 903. Եթե այդպես է, ապա լուսկերենում կամ գոնե մի բարբառում, Šantaš- ի առաջին հնչյունը եղել է ոչ թե ս կամ շ, այլ մի ուրիշ հնչյուն, որը հունարենում հաղորդվել է Z-ով: Այդ դեպքում հնարավոր է, որ հայերեն ժանտ/ժանդ «դաժան, անգութ, չար», «զզվելի», «ժանտախտ» բառը ստուգաբանորեն ինչ-որ կերպ առնչվեր Šantaš-ի հետ (այս բառի համար, վարկածային կերպով, իրանական ծագում է ենթադրվում. տե՛ս Ն. Ա ճ ա ո յ ա ն. Հայերեն արևատական բառարան, հ. II, Երևան, 1973, էջ 227): Ի միջի այլոց, կարծում են, որ Մանտա աստվածն է, որ վրացական հեթանոսական դիցարանում հանդես է գալիս որպես Zadeni (տե՛ս Գ. Ա. М е л и к и ш в и л и. К изучению древней восточно-малоазийской этнонимии, с. 52; А. М. А п а к и д з е. Культура Грузии в античную эпоху. – В кн.: „Очерки истории Грузии“. Т. 1, Тбилиси, 1989, с. 397):

³⁸ J. D. Hawkins. Corpus of Hieroglyphic Luwian Inscriptions. Vol. 1. Inscriptions of the Iron Age. Berlin, New York. 2000, p. 494.

³⁹ Ա. Ք ո ո յ ա ն. Մ. թ. ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը. Երևան, 1999, էջ 140-155:

կան կայսրության սեպագրական դպրությունը⁴⁰: Այսպիսով, Մանտայի՝ գաղափարագիր ^dAMAR.UTU ձևով ներկայացնելը կարող է բացատրվել ն՝ Խաթե երկրի վերաբնակիչների, և՛ ուրարտական գրիչների սեպագրական ավանդույթներով:

Հոգուտ մեր ենթադրության կարելի է մեկնաբանել նաև այն հանգամանքը, որ Մարդուկն ի հայտ է գալիս Իվարշայի հետ միաժամանակ, միննույն քաղաքում: Այսպիսով, հավանական է, որ Իվարշան Իարրին է, իսկ ^dAMAR.UTU-ն՝ Մանտան, երկուսն էլ ռազմի և ժանտախտի լուվական մեծ աստվածներ: Նոր տեղում նրանք պահպանել են իրենց հզորությունը և առաջնակարգ դիրքը՝ առաջինը նույնացվել է Խալդիի հետ, իսկ երկրորդը՝ հաջորդել ուրարտական աստվածների գլխավոր եռյակին:

КУЛЬТ БОГОВ ИВАРША И МАРДУКА В АРАРАТСКОЙ ДОЛИНЕ

НВАРД ТИРАЦЯН

Р е з ю м е

В урартских надписях, найденных в Араратской долине, упоминаются два бога, которые не встречаются в надписях других районов Армянского нагорья. Это— I(U)ARŠA и AMAR.UTU (идеографическое написание имени верховного вавилонского бога Мардука). Эти боги, видимо, были занесены лувийцами—выходцами из стран Хатти и Цупани, переселенными в Араратскую долину Аргишти I во время строительства крепости Эребуни. I(U)ARŠA идентифицируется с лувийским богом I(Y)ARIŠ-ом, а AMAR.UTU в лувийской традиции—идеограмма бога ŠANTAŠ-а.

CULT OF THE GODS IWARŠA AND MARDUK IN THE ARARAT PLAIN

NVARD TIRATSYAN

S u m m a r y

In the Urartian inscriptions of the Ararat plain two gods are mentioned, which we do not meet in the inscriptions of other regions of the Armenian Highland: I(U)ARŠA and AMAR.UTU (ideographic rendering of the supreme Babylonian god Marduk). These gods, apparently, were brought to the Ararat plain by the Luwians, inhabitants of the lands Hatti and Supani, settled there by Argišti I during the foundation of the fortress of Erebuni. I(U)ARŠA may be identified with the Luwian god I(Y)ARIŠ, while AMAR.UTU in the Luwian tradition is represented as the god ŠANTAŠ.

⁴⁰ И. М. Дьяконов. Урартские письма и документы. М.–Л., 1963, с. 18-25.